**Գործնական տեղեկատվություն՝**

Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի պաշտոնական կայքէջ՝
https://www.coe.int/en-GB/web/yerevan

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների ու կենսաբժշկության բաժնի պաշտոնական կայքէջ՝
https://www.coe.int/en/web/bioethics/home

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE



# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ III




COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

| | |
|---|---|
| **Սկիզբ** | 2025 թ. հունվարի 1 |
| **Տևողություն** | 24 ամիս |
| **Բյուջե** | 600,000 եվրո |
| **Դոնոր** | Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրակա-նացվող գործողությունների 2023-2026 թթ. ծրագիր |

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




Հիմնվելով Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2019-2022թթ. գործողությունների ծրագրի և 2023-2026թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացված «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության ոլորտում» ծրագրի առաջին երկու փուլերի ձեռքբերումների վրա՝ ծրագրի այս փուլում նախատեսվում է շարունակել աջակցություն տրամադրել Հայաստանի կառավարությանը՝ կենսաբժշկության և առողջապահության ոլորտի ազգային օրենսդրությունը եվրոպական չափանիշներին ներդաշնակեցնելու ուղղությամբ, որոնք ամրագրված են Եվրոպայի խորհրդի՝ Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայով, որը հայտնի է որպես Օվիեդոյի կոնվենցիա, և որը կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող միակ միջազգային փաստաթուղթն է:

Ծրագրի նախորդ երկու փուլերի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքներից և քաղված դասերից ելնելով՝ այս Ծրագիրն աջակցություն կտրամադրի քաղաքականության մշակման և իրականացման մակարդակում՝ աջակցելով կառավարությանը իրակա-նացնելու առողջապահության ոլորտում բարեփոխումները:

### Ծրագրի առանցքային ուղղություններն են՝

- Աջակցել կառավարության՝ կենսաբժշկական ոլորտում իրավական դաշտը եվրոպական չափանիշներին և մասնավորապես Օվիեդոյի կոնվենցիայով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու ջանքերին;
- Աջակցել բուժաշխատողներին և իրավաբաններին Օվիեդոյի կոնվենցիայով ամրագրված չափանիշներին առավել համապատասխան պրակտիկաներ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ կիրառելու ուղղությամբ;
- Խթանել պացիենտակենտրոն մոտեցումը առողջապահության ոլորտում;
- Խթանել առողջապահական հարցերի շուրջ հանրային երկխոսությունը;
- Աջակցել Ղարաբաղի բուժաշխատողների՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգին ինտեգրմանը:

Համագործակցության այս ծրագիրը իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից Հայաստանի համար 2023-2026թթ. գործողությունների ծրագրով կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության համար սահմանված առաջնահերթություններին համահունչ: Ինչպես նշված է Գործողությունների ծրագրում՝ Հայաստանի կառավարությունը Եվրոպայի խորհրդի հետ միասին կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման հարցը ճանաչել են իրենց առաջնահերթություններից մեկը:

**Ծրագիրը կնպաստի Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրի հետևյալ հատուկ արդյունքների ձեռքբերմանը:**

- Գործող օրենսդրական նորմերն ու իրավակիրառ գործընթացները համապատասխանեցված են Օվիեդոյի կոնվենցիայում ամ-րագրված սկզբունքներին:
- Բարձրացել է կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը:
- Բարելավվել է առողջապահական թեմաներով հանրային երկխոսության մակարդակը:
- Հայաստանը ավելի պատրաստված է Օվիեդոյի կոնվենցայի հետագա վավերացմանը: